<<Նոր ժամանակի կրթություն>> ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝

<<Ընթերցանությունը որպես ուսուցման գործիք ռուսաց լեզվի դասաժամերին >>

Առարկա՝ Ռուսաց լեզու

Հետազոտող ուսուցիչ՝ Սնապյան Մանանա

Ուսումնական հաստատություն՝

Երևանի Ռ. Աբաջյանի անվան թիվ 147 հիմնական դպրոց

Երևան 2023

Ընթերցանությունը որպես ուսուցման գործիք ռուսաց լեզվի դասաժամերին

Բովանդակություն

Ներածություն ……3
Գլուխ 1. Ընթերցանության կարողության ձևավորման մեթոդներն ու դրանց իրագործման եղանակները ռուսաց լեզվի դասավանդման ժամանակ ……...5
Գլուխ 2. Ի՞նչպես զարգացնել ընթերցելու կարողությունը ռուսաց լեզվի դասերին 6-րդ դասարանում ……10
Եզրակացություն ……14
Օգտագործված գրականության ցանկ ……16

Ներածություն

Թեմայի արդիականությունը: Ռուսաց լեզվի ուսուցման կարևոր նպատակնե - րից է՝ ձևավորել և դասարանից դասարան զարգացնել երեխաների կարդալու կարողությունները (որակական հատկանիշների պահպանմամբ):

Անշուշտ, եթե ձևավորված է կարդալու կարողությունը, ապա ընթերցած բնագրի շուրջ տարվող մեթոդապես ճիշտ աշխատանքի շնորհիվ ընթերցանությունը դառնում է նաև անձի բազմակողմանի զարգացման միջոց:

Անառարկելի է, որ ընթերցանությունը գիտելիքների ձեռք բերման, բազմակողմանի զարգացման, բառապաշարի հարստացման հիմնական աղբյուր է:

Կարդալու միջոցով հարստանում ու զարգանում են աշակերտների երևակայությունը, հոգեկան ներաշխարհը, խոսքը, ճաշակը:

Հենց այս է պատճառը, որ մանկավարժներն ու մեթոդիստներն ամեն ինչ անում են սերունդների մեջ ընթերցողական կարողությունների մշակման, ընթերցասիրության դաստիարակության համար: Այս կարևոր խնդրի լուծման ճանապարհին հիմնականը կարդալու հմտությունների զարգացումն է:

Որպեսզի երեխան սիրի գիրքը և կարդա, պետք է ուսուցիչը լավ կարդալ սովորեցնի աշակերտներին ու օգնի նրանց հաղթահարելու կարդալու ընթացքում առաջացած դժվարությունները:

Ա. Ղարիբյանը ժամանակին ասել է. «Բացատրական ընթերցանության հիմնական նպատակներից է կարդալ սովորեցնելը, որովհետև կարդալու ուսուցումը լեզվի ուսուցման ամենահիմնական ու պատասխանատու բաժինն է: Թե՛ լեզվի մյուս բաժինների և թե՛ միջնակարգի բոլոր այլ առարկաների յուրացումն ապահո - վում է աշակերտի կարդալու հմտությամբ: Անհնարին է ծանոթանալ որևէ գիտու - թյան հիմունքներին, առավել ևս դառնալ ժամանակակից կուլտուրայի պահանջների բարձրության վրա կանգնած մարդ, եթե կարդալ չգիտես: Կարդալու ուսուցման որակից է կախված մյուս առարկաների ուսուցման հաջողությունը, իսկ կար - դալու հմտության հիմնական որակը որոշվում է կարդալու ուսուցմամբ»:

Ահա և այս ամենից էլ բխում է թեմայի արդիականությունը:

Հետազոտական աշխատանքի նպատակը և խնդիրները: Հետազոտական աշխատանքի նպատակն է ուսումնասիրել՝ ընթերցելու կարողության ձևավորումը ռուսաց լեզվի դասաժամերին:

Խնդիրներն են՝

- ուսումնասիրել՝ ընթերցանության կարողության ձևավորման մեթոդներն ու դրանց իրագործման եղանակները ռուսաց լեզվի դասավանդման ժամանակ,
- ուսումնասիրել, թե ի՞նչպես զարգացնել ընթերցելու կարողությունը ռուսաց լեզվի դասերին 6-րդ դասարանում:

Հետազոտական աշխատանքի կառուցվածքը:

Հետազոտական աշխատանքը կազմված է՝ ներածական մասից, երկու բաժիններից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Գլուխ 1. Ընթերցանության կարողության ձևավորման մեթոդներն ու դրանց իրագործման եղանակները ռուսաց լեզվի դասավանդման ժամանակ

Ռուսաց լեզվի դասընթացի կարևոր բաղադրիչներից է ընթերցանությունը, որի նպատակն է զարգացնել երեխաների՝

- կարդալու, վերարտադրելու կարողությունները,
- հարստացնել նրանց խոսքն ու բառապաշարը, ճանաչողական և լեզվական գիտելիքները,
- ձևավորել արժեքների համակարգ:

Սովորողների կարդալու տեխնիկայի զարգացմանը զուգընթաց՝ անհրա - ժեշտ է նաև արտահայտիչ խոսքի և կարդալու կարողություններ մշակել դեռևս գրաճանաչության այբբենական շրջանում:

Այդ աշխատանքը պետք է սկսել՝ աշակերտներին ծանոթացնելով խոսքի տեխնիկայի բաղադրիչներին՝ շնչառություն, ձայն, հնչերանգ, առոգանություն:

Հատուկ շնչառական վարժությունների միջոցով աշակերտներին առաջին հերթին պետք է սովորեցնել ճիշտ շնչել:

Կարելի է կատարել առոգանությունը զարգացնող վարժանքներ: Մեթոդիկայում մշակված են աշակերտների հնչյունային լսողությունը և առոգանությունը զարգացնող շատ վարժություններ:

Այսպես՝

- կարդալ մտքում,
- արտասանել՝
  - շշուկով,
  - դանդաղ,
  - ցածրաձայն,
  - կամաց,
  - բարձրաձայն, և
  - արագ:

Նախադասության մասին գիտելիքների ուսումնասիրման ժամանակ անհրաժեշտ է երեխաների ուշադրությունը հրավիրել՝ հարցական, բացականչական, հրամայական, պատմողական:

Հայտնի է արտահայտիչ ընթերցանության երկու եղանակ՝

1. բեմական, և
2. դասարանական:

Անառարկելի է, որ արտահայտիչ կարդալու նախապայմանը բնագիրը լավ հասկանալն է: Կան նաև մի շարք արտաքին նշաններ, որոնք երեխաները պետք է ճանաչեն ու ըմբռնեն: Դրանք հայերենի կետադրական ու առոգանական նշաններն են: Աշակերտներն աստիճանաբար պետք է գիտելիքներ ձեռք բերեն արտասանական երանգավորման կամ հնչերանգի ու նրա բաղադրիչների մասին:

Նրանց գիտակցությանը պետք է հասցվի, որ խոսքն ազդեցիկ ու լսելի դարձնելու համար կարևոր են ձայնի ու նրա ելևէջների փոփոխությունը՝ բարձրացումն ու ցածրացումը, կարդալու տեմպը, ռիթմը, դադարները, շեշտը, և սովորեցնի այդ ամենը կիրառել կարդալու ընթացքում:

Կետադրական նշանների մասին նախագիտելիքներ տրվում են դեռևս գրաճանաչության նախապատրաստական շրջանում:

Ջ. Գյուլամիրյանի կարծիքով[1]՝ հենց այս փուլում էլ անհրաժեշտ է աշակերտներին բացատրել, թե կետադրական կամ առոգանության որ նշանն ինչպես է կարդացվում: Եվ այդ կարողությունն աստիճանաբար զարգացնել: Մեր ուսումնասիրությունները ցույց են տվել, որ գրաճանաչության այբբենական և հետայբբենական շրջաննե - րում երեխաները ընթերցանության ժամանակ դժվարանում են, չեն կարողանում տարբերակել առոգանության նշանների հնչերանգը:

Որպեսզի երեխաները լավ ըմբռնեն և տարբերեն նախադասությունների հնչերանգը, ուսուցիչը կարող է դիմել հետևյալ հնարին:

Մեթոդիկայում մշակված են մի շարք հնարներ, որոնք նպաստում են ընթերցած ստեղծագործությունը խորությամբ ըմբռնելուն. դիտարկել և մեկնաբանել ստեղծագործության վերնագիրը, առանձնացնել հենակետային (բանալի) բառերն

[1] Տե՛ս, Գյուլամիրյան Ջ.Հ., Խոսքի զարգացում. Եր.: 2004, էջ 28-29:

ու արտահայտությունները, վերլուծել բնագիրն ու պարզաբանել հիմնական գաղափարը, ենթատեքստը և այլն:

Աշակերտների արտահայտիչ ընթերցելու կարողության ձևավորմանը մեծապես նպաստում են ուսուցչի կամ աշակրետների կարդալու եղանակների վերլուծությունները, որը կարելի է կատարել հետևյալ հաջորդականությամբ.

- Կարդալ ստեղծագործությունը՝ ուշադրություն հրավիրելով ընտրված ստեղծագործությանը վերաբերող յուրաքանչյուր մանրուքի:
- Որոշել ստեղծագործության ենթատեքստը, ի՞նչ է հեղինակը կամեցել հասկացնել ընթերցողին:
- Տարբերել արձակի և չափածոյի ընթերցման յուրահատկությունները: ՏՀՏ տեսալսողական սարքերի միջոցով ունկնդրել հեքիաթ և բանաստեղծություն ու համեմատել:
- Մտքում ընթերցելով՝ առանձնացնել այն գլխավոր հատվածները, որոնք հատկապես հուզել են, հետաքրքրել և զգացմունքներ արթնացրել:
- Կատարել արտասանական վերլուծություն՝ որ տողը ինչպե՞ս պետք է ընթերցել (ձայնի ինչպիսի՞ բարձրությամբ, ի՞նչ շեշտադրումներով և այլն):

Դերերով և խմբովին կարդալը ևս մեծապես նպաստում է երեխաների արտահայտիչ կարդալու կարողության զարգամանը, քանի որ այդ դեպքում նրանք գիտակցում են հերոսների խոսքը, հնչերանգը, ձայնի փոփոխությունները և ըստ այդմ էլ՝ ընտրում են կարդալու ճիշտ ձևն ու եղանակը:

Աշակերտների՝ դերերով ընթերցելուց հետո, հանձնարարելի է, որ մեկ անգամ էլ ուսուցիչը կարդա նյութը՝ ամբողջացնելով աշակերտների ընթերցանությունը, որպեսզի նրանք մեկ անգամ ևս համոզվեն, թե կարդալու ժամանակ որքան կարևոր է արտահայտչականության պահպանումը: Այս եղանակով ուսուցիչը պետք է սովորողներին զգացնել տա հեղինակի և հերոսների խոսքի հնչերանգային տարբերությունները, բացատրի, որ հեղինակի խոսքը կարդում են դանդաղ, հանգիստ տոնով, պատմողական հնչերանգով, իսկ գործող անձերի կամ կերպարների խոսքերը՝ նրանց յուրաքանչյուրին հատուկ ձայնով ու հնչերանգով:

Ինչպես նաև պարզաբանի, թե ինչու է անհրաժեշտ այդպես կարդալ: Մեթոդների և միջոցների ընտրության ժամանակ դասվարն անհրաժեշտաբար պետք է հաշվի

առնի առարկայական ծրագրի բովանդակությունը, ձևավորվող հասկացություն - ների կամ պատկերացումների առանձնահատկությունները: Այսպես՝ հնչյունների արտասանական դրսևորումներին ծանոթանալիս անհրաժեշտ է ամենից առաջ դիտարկել հենց իրենց՝ աշակերտների արտաբերական առանձնահատկությունները:

Աշխատելուց խոսքի հնչյունային կողմի զարգացման ուղղությամբ՝ ուսուցիչը պետք է հասնի այն բանին, որ աշակերտները ոչ միայն լսեն հնչյունը, այլև բառերն արտասանեն այնպես, որ պարզ և հստակ լսելի լինեն բոլոր հնչյունները: Հնչյուն - ների արտասանությունն ու յուրացումը կատարվում է գործնական վարժությունների միջոցով:

Դրանք ընտրելիս ուսուցիչն առաջնորդվում է հետևյալ սկզբունքներով[2].

1. Վարժությունների օրինակներն ու բնագրերը ընտրվում են՝ հաշվի առնե - լով սովորողների բարձրաձայն արտասանելու, լսողական ընկալման և մտապահման առանձնահատկությունները:
2. Վարժությունները չպետք է լինեն երկար, միատեսակ և հոգնեցնեն աշակերտներին:
3. Վարժությունների իրականացումը պետք է լինի համակարգված և իրականացվի ուսուցչի օգնությամբ:

Արտահայտիչ ընթերցանության կարողության ձևավորումը նպատակահար - մար է իրականացնել և՛ հատուկ, և՛ հարակից վարժությունների միջոցով:

Հատուկ վարժությունները կատարվում են անմիջապես ռուսաց լեզվի դասերին՝ նպատակաուղղելով հենց արտահայտիչ ընթերցելու կարողությունների զարգացմանը, իսկ հարակից վարժությունները անցկացվում են լեզվական որևէ նյութ բացատրելու ընթացքում, երբ ուսուցիչը միևնույն ժամանակ երեխաներին հանձնարարում է բարձրաձայն ընթերցել նախադասությունը՝ պարզ, հստակ և արտահայտիչ: Տվյալ դասի համար այդ թեման հիմնականը չէ, բայց ուսուցիչը, օգտվելով իրավիճակից, բնագրի ընթերցմանը զուգընթաց՝ հիշեցնում է արտահայտիչ խոսքի պահանջները: Արտահայտիչ կարդալու կարողության զարգացման հա -

[2] Տե՛ս, Ա. Գյուլբուդաղյան և ուրիշներ., Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար, Եր.: 2000, էջ 36-38:

տուկ վարժանքներից է տրամադրության բառարանը, նկարի բառային նկարումը, մրցակցային ընթերցանությունը:

Տրամադրության բառարան: Այս, այսպես կոչված բառարանում, գրելով ընթերցվող բնագրի «ուրախ», «տխուր», «երջանիկ», «ոգևորված», «մեղմ» բառերը վերլուծում են նյութը և եզրակացնում, թե հեղինակն ինչ զգացմունքներով ու հույզերով է գրել տվյալ ստեղծագործությունը: Այնուհետև ընթերցելիս արդեն ձգտում են արտահայտել այդ տրամադրությունները:

Նկարի բառային նկարում:

Ջ. Գյուլամիրյանն այս վարժությունն անվանում է «բառային նկարչություն»: Աշակերտները փորձում են բառերով նկարագրել պատկերվող իրադարձությունը, գործող անձերին, առանձնացնում են ստեղծագործության մի հատված՝ գույներով ներկայացնելու համար:

Այս նկարչություն-վարժությունը զարգացնում է նաև երեխաների երևակայությունը:

Մրցակցային ընթերցանությանն ու արտահայտիչ ընթերցելուն նախապատրաստվելիս սովորողը պետք է հետևի հետևյալ քայլաշարին՝

- կարդալ և երևակայությամբ պատկերացնել ընթերցվող բնագիրը, որոշակի վերաբերմունք դրսևորել նկարագրվող դեպքերի նկատմամբ, որոշել կարևոր մտքերն ու ասելիքն ամբողջացնող տողերը, ընտրել արտահայտչամիջոցները, տրամաբանական շեշտերի տեղը, նշել դադարները, տեմպը և այլն, անպայման նկատի ունենալ, որ բնագիրն ընթերցում է ունկնդիրների համար և հաղորդակցվում է նրանց հետ:

Նմանատիպ վարժությունները զարգացնում են երեխաների արտահայ - տիչ կարդալու գործնական հմտությունները: Նրանք փորձում են արտահայտել իրենց՝ տպավորությունները, մտքերը, հուզմունքները՝ ձեռք բերելով գեղեցիկ և տպավորիչ խոսք կառուցելու կարողություն[3]:

[3] Տե'ս, Մկրտչյան Գ., Դասավանդման գործընթացի կառավարումն ու վերահսկողությունը: Ժամանակակից մանկավարժական մոտեցումները գործողության մեջ, Եր.: 2005, էջ 52-54:

Գլուխ 2. Ի՞նչպես զարգացնել ընթերցելու կարողությունը ռուսաց լեզվի դասերին 6-րդ դասարանում

Նախորդ դարի 90-ական թվականներին տեղի ունեցած քաղաքական և տնտեսական փոփոխությունները չէին կարող իրենց ազդեցությունը չունենալ նաև կրթահամակարգի վրա: Առանցքային խնդիր դարձավ հասարակության կողմից կրթության վերաիմաստավորումը:

Կրթական համակարգը կանգնեց բարեփոխման և արդիականացման համազգային խնդրի առջև: Այսօր դպրոցի ուսուցիչների համար ոչ միանշանակ և բարդ իրավիճակ է ստեղծվել:

Մանկավարժական գիտության և իրականության մեջ լուրջ փոփոխություններ են տեղի ունեցել: Հասարակության նորացումը (մոդեռնիզացիան) անպայմանորեն ենթադրում են նաև կրթության նորացում և իրական շրջադարձ դեպի մարդը՝ անհատը: Եվ ինչպես իրավամբ բնութագրում է մերօրյա վաստակավոր մեթոդիստ Գ. Գյուլամիրյանը՝ մեթոդիկան գլխիվայր շրջվեց:

Կրթության մեջ մուտք գործեց ժամանակակից տեխնոլոգիաները, որոնք այսօր արդեն դիտվում են որպես կրթական նոր հայեցակարգի իրականացման միջոց: Հասարակական բարեփոխումներին համապատասխան՝ մանկավարժագիտության մեջ և պրակտիկայում ձևավորվեցին նոր հասկացություններ:

Այսպես՝ նման պայմաններում արդիական ու առանձնահատուկ նշանակություն են ձեռք բերում մանկավարժության՝

- հումանիստական ուղղվածությունը,
- միջմշակույթային հաղորդակցությունը և ինտերակտիվ ուսուցման մեթոդները,
- մանկավարժական բարձր տեխնոլոգիաները,
- աշակերտակենտրոն, անձնակողմնորոշված ուսուցումը և նմանատիպ շատ հասկացություններ:

Կտրուկ անցում կատարվեց կրթական գործընթացի անմիջական մասնակիցների փոխհարաբերություններում:

Այսպես՝

- դասավանդողի և ուսումնառողի անձնային իրավահավասարություն, սուբյեկտ-սուբյեկտային դիրքորոշումների հաստատում,
- միջին մակարդակի ուսումնառողի շերտավորված և անհատական ծրագրերի մշակում և այլն:

Դրանով պայմանավորված՝ ձևավորվեց անձնակենտրոն մոտեցում, ըստ որի՝ ուսումնական գործընթացի կենրոնական դեմքը ուսումնառողն է:

Առաջ քաշվեց նաև աշակերտի դասանպատակի ձևավորման անհրաժեշտությունը, որը ինչպես նկատում է մանկավարժագետ Ս. Մանուկյանը՝ նախկինում մեթոդների բոլոր բնորոշումներում տեղ չէր գտել[4]:

Ե՛վ համագործակցային մանկավարժություն ասվածը և՛ փոխգործուն ուսուցման նոր մեթոդները և՛ աշակերտակենտրոն ու ուսանողակենտրոն մոտեցումներն որոշ վերապահությամբ՝ ունեն դրական միտումներ:

Այսօր դպրոցը ունի նոր հիմնահարցերի լուծման կարիք:

Ուսուցման մեթոդներով և բովանդակությամբ պայմանավորված՝ փոխվել է ուսուց - չին և աշակրտներին ներկայացվող պահանջները: Խոսքն այստեղ մասնավորապես ուղղված է երեխաների կարդալու կարողությունների ձևավորման խնդրին:

Գրաճանաչության շրջանի վերջնական նպատակը բնագիրը հասկանալով կարդալն է, որը մեծապես պայմանավորված է առաջին ընթերցման ճիշտ իրականացումից:

Մանկավարժագիտական նոր մոտեցումն ընդունում է, որ բնագիրն առաջին անգամ պետք է ընթերցի աշակերտը: Նկատենք, որ դեռ 80-ական թվականներին այս փորձը կատարել է մի ռուս մեթոդիստ, ով առաջարկում էր առանձին դեպքերում գեղարվեստական բնագիրերի առաջին իսկ ընթերցումը հանձնարարել երեխաներին:

Ուսուցչի ընթերցանության առանձնահատկությունները խորհել է տվել շատ մեթոդաբանների: Այս հարցում նախորդ դարի և մերօրյա մանկավարժների տեսակետները գրեթե համընկնում են: Նրանց կարծիքով և՛ դասվարը, և՛ հատկապես գրականության ուսուցիչը պետք է առաջին հերթին տիրապետի լավ ընթերցելու կարողությանը:

Ռուս մեթոդաբան Բ.Ս. Նայդենովը առաջինն է փորձել սահմանել այն:

---

[4] Տե՛ս, Պետրովսկի Ա., Տարիքային և մանկավարժական հոգեբանություն, Եր.: 1977, էջ 39-41:

Նա համեմատելով ուսուցչին գեղարվեստական ասմունքի վարպետի հետ՝ համոզվել է, որ «ասմունքի ոլորտում ուսուցիչը մասնագետ է, բայց այլ ուղղության, քան ասմունքի վարպետը»:

Ասվածին հավելենք, որ ուսուցիչ մասնագիտությունը որոշ աղերսներ ունի ոչ միայն ասմունքի վարպետի, այլև դերասանի և ռեժիսորի մասնագիտության հետ: Ինչպես դերասանի, այնպես էլ ուսուցչի խոսքը ուղղված է որոշակի լսարանի:

Ռեժիսորի հետ մանկավարժի նմանությունը պայմանավորված է նրանով, որ ռեժիսորը փորձերի ընթացքում, իսկ մանկավարժը դասագործընթացում պետք է կարողանա գործադրել բազմաթիվ հնարներ՝ հուզակամային ներգործություն առաջացնելու նպատակով:

Նոր դասի ընթերցումը և յուրացնել տալը անգամ փորձառու ուսուցչից պահանջում է լավ նախապատրաստություն:

Դասի նպատակը որոշելուց և ուսումնասիրվող նյութի ընթերցումից հետո ուսուցիչը կարող է կարդալ բնագիրը՝ գեղարվեստական ընթերցանության պահանջներին համապատասխան, բացատրել առոգանական յուրաքանչյուր նրբություն:

Սա հնարավորություն կտա աշակերտներին ըմբռնել նոր նյութի բովանդակությունը և բավականություն ստանալ:

Ընթերցելիս ուսուցիչը հաճախ աշակերտների ուշադրությունը պետք է հրավիրի այս կամ այն կարևոր մտքերի վրա՝ օգնելով, որ նրանք կռահեն հեղինակի ասելիքը: Արտահայտիչ կարդալով՝ նա աշակերտներին պետք է ոչ միայն ցույց տա, թե բնագրի որ մասն ինչպես է հարկավոր ընթերցել, այլև սովորեցնի՝ ձայնային փոփոխությամբ, դադարներով, հնչերանգով և ելևէջներով, ինչպես վերարտադրել այս կամ այն միտքը, որ ներգործի ու հուզական պահեր պարգևի ունկնդրին՝ այդ գործընթացին մասնա - կից դարձնելով նաև աշակերտներին: Եվ բոլորովին պատահական չէ, որ բոլոր ժամանակներում կարևոր տեղ է հատկացվել ուսուցչի խոսքին և ընթերցանու - թյանը, որը նախ՝ կենդանի խոսքի լավագույն օրինակն է, ապա՝ աշակերտի մտքի ու հուզաշխարհի վրա ներգործելու լավագույն միջոց: Ուսուցչի՝ սրտի խոսքից բխած, զգացմունքային, տպավորիչ ու համոզիչ խոսքը, դիմախաղը և շարժուձևը երեխայի մեջ առաջացնում է հուզական զգացմունքներ, ստեղծում պատկերավոր երևույթներ և ամենակարևորը հետաքրքրություն է առաջացնում ընթերցանության նկատմամբ:

Ուշագրավ է հայտնի մանկավարժագետ, հոգեբան Գ. Էդիլյանի հետևյալ դիտարկումը. «Ուսուցիչը ինքը գեղեցիկ, արտահայտիչ կարդում է դասարանում աշակերտների համար:

Աշակերտները իրենց կրկնակի կարդալու ժամանակ նմանվում են ուսուցչին, ուսուցիչը հարկավոր դեպքում ուղղում է սխալները և աստիճանաբար գեղեցիկ կարդալուն վարժեցնում աշակերտներին»: Ուրեմն՝ ուսուցիչը պետք է անպայման կարդա, բայց, ինչպես այժմյան մեթոդիկայում է ընդգծված, պայման չէ, որ առաջինը ինքը կարդա, քանի որ աշակերտակենտրոն ուսուցման գործընթացը ենթադրում է աշակերտների ինքնուրույնություն, գիտելիքների և կարողությունների ձեռքբերման գործընթացին ակտիվ մասնակցություն, աշակերտն ինքն է ընտրում իր մոտեցումը, ներկայացնում իր կարծիքը, իսկ ուսուցիչը ընդամենը ուղղորդում է, օգնական խորհրդատու կամ ինչպես նկատում է Ջ. Գյուլամիարյանը՝ «ուսուցիչը թող հանդես գա այնտեղ, որտեղ աշակերտը կդժվարանա»[5]:

[5] Տե'ս, Գյուլամիրյան Ջ.Հ., Խոսքի զարգացում. Եր.: 2004, էջ 41-42:

Եզրակացություն

Միշտ էլ դպրոցի հիմնական խնդիրներից մեկը եղել և մնում է իր սաներին սովորեցնել սիրել գիրքը, օգտվել նրանից, անընդհատ նոր գիտելիքներ քաղել այնտեղից:

Իսկ դրան կարելի է հասնել աշակերտների մեջ լավ կարդալու կարողությունը մշակելով, որովհետև այն մարդու մտավոր զարգացման ու առաջընթացի հիմնական նախապայմանն է: Որքան երեխաների մեջ ամուր և հաստատուն դրվեն լավ կարդալու կարողության մշակման հիմքերը, այնքան կարդալը երեխայի համար ավելի շուտ կդառնա գիտելիքների ձեռքբերման կարևոր ու անփոխարինելի միջոց:

Հետևաբար, գրաճանաչության ուսուցման ժամանակ յորաքանչյուր նոր տառի ուսուցումը, իսկ հետագայում յորաքանչյուր նոր բնագրի մշակումը պետք է երեխաների մեջ կարդալու կարողության մշակման ու զարգացման միջոց դառնա, որպեսզի դասընթացի վերջում վերածվի որոշակի հմտության:

Լավ կարդալ ասելով պետք է հասկանալ ճիշտ, հասկանալով, սահուն ու արտահայտիչ ընթերցումը, այսինքն՝ երբ առկա են կարդալու որակական բոլոր հատկանիշները:

Ընթերցանության նպատակներից մեկն էլ երեխաների մտավոր զարգացումն է, նրանց նոր գիտելիքների ու տեղեկությունների հաղորդումը, որոնք ոչ միայն պետք է նպաստեն աշակերտների կրթական մակարդակի բարձրացմանը, այլև նրանց պետք է նախապատրաստեն ավելի բարձր դասարաններում ուսումնական տարբեր առարկաներից համակարգված դասընթացների ուսումնասիրությանն անցնելու:

Դասարանական ընթերցանության նպատակներից մեկն էլ ռուսաց լեզվի բանավոր և գրավոր խոսքի գործական ուսուցումն է:

Ընթերցանության դասերին երեխաներին գործնական կերպով ռուսաց լեզու սովորեցնելիս խստորեն հաշվի է առնվում, որ լեզուն և միտքը, բառը և իմաստը անխզելի միասություն են կազմում, որ չկա լեզու մտքից անկախ և բառ՝ իմաստից անկախ, որ լեզուն հենց այնքանով է արժեքավոր, որքանով որ այն մտքի արտահայտությունն է, բառը՝ այնքանով, որ որևէ կոնկրետ իմաստ է արտահայտում, ցույց է տալիս օբյեկտիվ աշխարհի օրենքներն ու հարաբերությունները:

Ընթերցանությունը ոչ միայն գործնական ճանապարհով երեխաների մեջ լեզվական պաշարի՝

- բառերի,
- դարձվածքների,
- լեզվական ու արտահայտչական ձևերի ու բնորոշ համեմատությունների կուտակման միջոց է, այլև լեզվական կարողությունների՝ խոսքի կառուցման, բառերի ու դարձվածքների տեղին ու ճիշտ օգտագործման, համաձայնության ու կապակցության և համանման այլ կարողությունների ու հմտությունների մշակման ու զարգացման միջոց:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ա. Գյուլբուդաղյան և ուրիշներ., Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար, Եր.: 2000
2. Գյուլամիրյան Ջ.Հ., Խոսքի զարգացում. Եր.: 2004
3. Մկրտչյան Գ., Դասավանդման գործընթացի կառավարումն ու վերահսկողությունը: Ժամանակակից մանկավարժական մոտեցումները գործողության մեջ, Եր.: 2005
4. Պետրովսկի Ա., Տարիքային և մանկավարժական հոգեբանություն, Եր.: 1977